ԼԵՌՆԱԳՅՈՒՂ

Մակերես՝ 22.4 կմ^2

Բնակչություն՝ 29

Ինդեքս՝ 2804

Լեռնագյուղ գյուղը գտնվում է ՀՀ հյուսիս-արևմուտքում Շիրակի լեռնաշղթայի հյուսիսային լանջին, Իլլի գետի հովտում, ծովի մակարդակից 1980մ բարձրության վրա: Լեռնագյուղի հին անվանումն է՝ Չոռլի, որպես բնակավայր ունի 300 տարվա պատմություն: Լեռնագյուղը հիմնադրվել է 1832 թ.–ից Ղարսից գաղթածներով:

1991 թ.-ին գյուղում իրականացվել է սեփականաշնորհման ընդհանուր գործընթաց:

Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամ և պտղաբուծությամբ: